

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև միջնակարգ կրթության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լիբանանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության մասին 1997 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված Համաձայնագրի հիմնադրույթները,

առաջնորդվելով երկու երկրների ժողովուրդների միջև գոյություն ունեցող ավանդական բարեկամական առանձնահատուկ հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման ցանկությամբ,

ձգտելով զարգացնել և խորացնել համագործակցությունը միջնակարգ կրթության բնագավառում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրին, ինչպես նաև իրենց երկրների ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ կնպաստեն երկու երկրների միջև միջնակարգ կրթության բնագավառում համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

### Հոդված 2

Պայմանավորվող կողմերը կաջակցեն երկու երկրների միջնակարգ կրթական հաստատությունների միջև անմիջական կապերի հաստատմանը և զարգացմանը:

### Հոդված 3

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն ուսուցիչների և ուսանողների փոխայցելությունները՝ միջնակարգ կրթության

բնագավառում հաստատությունների փորձն ու նվաճումները միմյանց ծանոթացնելու նպատակով:

Փոխանակումների կոնկրետ ձևերն ու պայմանները համագործակցության ընթացքում կկարգավորվեն շահագրգիռ վարչությունների ու կազմակերպությունների միջև՝ համապատասխան համաձայնագրերով:

#### Հոդված 4

Պայմանավորվող կողմերը կբանակցեն իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան տրված կրթական վկայականները փոխադարձաբար հավասարազոր ճանաչելու շուրջ և այդ նպատակով կստորագրեն համապատասխան համաձայնագրեր:

#### Հոդված 5

Պայմանավորվող փոխհամագործակցությանը կազմակերպությունների գործունեության շրջանակներում:	կողմերը միջազգային	կնպաստեն կրթական
--	-----------------------	---------------------

#### Հոդված 6

Միմյանց մշակույթի, պատմության և գրականության փոխադարձ տարածման նպատակով Պայմանավորվող կողմերը կնպաստեն Լիբանանում արաբերեն հայագիտական դասագրքերի, Հայաստանում՝ հայերեն արաբագիտական դասագրքերի ստեղծմանը:

#### Հոդված 7

Պայմանավորվող կողմերը կնպաստեն մյուս երկրի լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և ուսուցմանը իրենց ուսումնական հաստատություններում, կաջակցեն մասնագետների, ուսումնամեթոդական նյութերի և ձեռնարկների փոխանակմանը:

#### Հոդված 8

Պայմանավորվող հաստատությունների ուսանողների	կողմերը միջև ուղղակի փոխանակմանը,	կնպաստեն կապերի հաստատմանը և երիտասարդական	կրթական
---	---	---	---------

կազմակերպությունների միջև համագործակցությանը, համատեղ ուսանողական ֆորումների կազմակերպմանը:

#### Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրականացման համար Պայմանավորվող կողմերը կմշակեն և կիրառործեն համապատասխան աշխատանքային ծրագրեր: Այդ ծրագրերը կարող են լինել ամենամյա կամ ընդգրկել ավելի տևական ժամկետ: Ծրագրերը կկիրառվեն Պայմանավորվող կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրվելու պահից:

#### Հոդված 10

Պայմանավորվող կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխություններ և լրացումներ կատարել սույն Համաձայնագրում, որոնք կստորագրվեն առանձին արձանագրությամբ: Արձանագրությունը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

#### Հոդված 11

Պայմանավորվող կողմերի միջև ծագած ցանկացած վեճ՝ կապված սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ, կլուծվի բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

#### Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ դրա ուժի մեջ մտնելու համար նախատեսված ընթացակարգը ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով փոխադարձաբար ծանուցելու պահից և կգործի հինգ տարի ժամկետով:

Այն կարող է երկարաձգվել հաջորդ հինգ տարիների համար, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չժանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում Համաձայնագրով նախատեսված այն աշխատանքների

իրականացմանը, որոնք նախաձեռնվել, բայց չեն ավարտվել  
Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Կատարված է Բեյրութ քաղաքում 1998 թվականի սեպտեմբերի  
16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և  
անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Հայերեն և արաբերեն տեքստերի մեկնաբանման ժամանակ  
առաջացած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը  
կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի օգոստոսի 1-ից: